



**Սիրելի՛ հայրենակիցներ,**

Տարվա ամենահեքիաթային այս ժամանակահատվածում ցանկանում են շնորհավորել բոլորիդ և շնորհակալական խոսք ասել անցնող տարվա ընթացքում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կատարված աշխատանքի համար:

Բնապահպանական խնդիրներն առնչվում են բոլորիս և առանց դրանց լուծման՝ Երկիր մոլորակի գոյությունը և նրա բնակիչների առաջընթացի հեռանկարները մշուշոտ կլինեն:

ՀՀ կառավարությունը, ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության, իրականացնում է ոլորտի բարեփոխումների հիմնարար միջոցառումներ: Անցնող տարում տրվել է արմատական փոփոխությունների մեկնարկը, և գալիք տարին ծանրաբեռնված ու, համոզված ենք, արդյունավետ աշխատանքային տարի է լինելու: Սակայն բնապահպանական խնդիրների լուծումն անհնար է միայն պետական միջոցներով, այն յուրաքանչյուրիս ջանքերի մեկտեղման, մեզանում բնապահպանական մշակույթի ձևավորման արդյունքում կարող է ապահովվել: Շնորհակալություն են հայտնում հասարակական, միջազգային կազմակերպություններին և բնապահպանական հարցերով մտահոգ քաղաքացիներին՝ անցնող տարում համատեղ աշխատանքի համար և ակնկալում, որ 2018-ին այդ համագործակցություն էլ ավելի կընդլայնվի ու կխորանա, ինչն էապես կբարձրացնի շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրերի արդյունավետությունը:

**Սիրելի՛ հայրենակիցներ,**

Շնորհավորում են Ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ, մաղթում բարեկեցություն և բարօրություն, Ձեր ընտանիքներին սեր և երջանկություն, երկրին՝ խաղաղություն: Թող գալիք տարում մեր պետությունն էլ ավելի հզորանա: Թող Նոր տարին լինի բեղմնավոր աշխատանքի, արարումների, հաղթանակների և նպատակների իրականացման տարի:

ՀՀ բնապահպանության նախարար  
ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ



# Մեր ֆաղափականության հիմքում եղավ բնադահադանական և ճնշեսական շահերի հավասարակշռության սկզբունքը



**ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն Դեկտեմբերի 25-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսել է իր ղեկավարած ոլորտում 2017 թվականին իրականացրած աշխատանքների, ձեռքբերումների և հետագա ծրագրերի մասին:**

Հիշեցնելով, որ 2016թ. ամփոփիչ ասուլիսում ներկայացրել է ոլորտում առկա խնդիրների ակտորոշումը՝ բնապահպանության նախարարը նշել է, որ դրանց լուծման նպատակով արդեն ՀՀ կառավարության ծրագրում մինչև 2022 թվականն ամրագրվել են մի շարք գործողություններ, որոնք իրականացվում են ժամանակին և նախատեսված բոլոր ուղղություններով առկա են ավարտված առարկայական գործողություններ: Օրենսդրական բարեփոխումների իրականացման համատեքստում ներկայումս 6 տասնյակից ավել իրավական ակտեր գտնվում են e-draft.am կայքում, ինչը նշանակում է, որ կարգավոր-

ման ոլորտում հիմնարար վերանայումներ իրականացնելու քաղաքականությունը լայն թափով ընթացքի մեջ է:

Արծվիկ Մինասյանը հայտնել է, որ էական առաջընթաց կա քաղաքացիների և պետական կառույցների հետ պատասխանատու ստորաբաժանումների անմիջական շփման նվազեցման հարցում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով: Եթե 2016թ. 60/40 տոկոս էր կազմում թղթային և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, ապա ներկայումս առկա է 67/33 տոկոս հարաբերակցություն: Արդյունքում նվազել են անձնական շփումները, ծառայություններ մատուցելու ժամկետները: Ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում, ըստ նախարարի, ձևավորվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, որը գտնվելու է կառավարության ենթակայության տակ և օժտված է լինելու նոր լիազորություններով և գործիքակազմով:

**• Մեր ֆաղափականության հիմքում եղավ բնապահպանական և սնեսական շահերի հավասարակշռության սկզբունքը**

Սկիզբը էջ 2 /

Մեկ այլ ինստիտուցիոնալ բարեփոխման արդյունքում ձևավորվել է միասնական մոնիթորինգային համակարգ՝ գերատեսչության համակարգում գործող 4 պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպվել են և արդեն ձևավորվել է մոնիթորինգի էլեկտրոնային միասնական տվյալներ: Այս ուղղությամբ հիմնարար փոփոխությունները շարունակվում են՝ երկրում շրջակա միջավայրի հիմնական բոլոր բաղադրիչները պետական մոնիթորինգային մեկ համակարգում լիարժեք կենտրոնացնելու նպատակով: Նախարարն առանձնացրել է նաև անտառների միասնական կառավարման ինստիտուցիոնալ լուծումը և տեղեկացրել, որ այն իրականացման շրջանակներում արդեն 33 Նախագահը ստորագրել է հրամանագիր Անտառային պետական կոմիտե ստեղծելու մասին, որով վերանում է անտառների տարանջատված կառավարումը: Այս ոլորտում առաջիկայում գերակայելու է անտառների կառավարման 3 հիմնարար սկզբունք՝ բնապահպանական, տնտեսական և սոցիալական: «Անտառների պահպանության քաղաքականությունը հիմնարար փոփոխության է ենթարկվելու: Առաջնայինը լինելու է պահպանությունը, որից անջատվելու է շահագոծումը, այլ ոչ թե նախկին ձևով՝ շահագործման միջոցով պահպանության իրականացումը: 33 գյուղատնտեսության, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություններն ունենալու են հնարավորություններ ներգրավված լինելու այդ սկզբունքների պահպանությանը և զարգացման ծրագրերի իրականացմանը», - նշել է Արծվիկ Մինասյանը:

Տարվա կարևոր ձեռքբերումներից է եղել պետական և հասարակական միավորումների հետ համագործակցության ընդլայնումը, ինչի համատեքստում Երևանի քաղաքապետարանի և մի շարք այլ համայնքների հետ իրականացվել է էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագրեր, ինչպես նաև՝ 33 Սյունիքի մարզի 32 համայնքի ցուցաբերվել է 5000-ական եվրոյի չափով դրամաշնորհային աջակցություն: Վերջինով այդ համայնքներում կլուծվեն նվազագույն խնդիրներ՝ անտառների վրա ճնշումը թուլացնելու համար: Բնապահպանական գերատեսչության ղեկավարը հայտնել է, որ 33 գլխավոր դատախազության հետ համագործակցության շրջանակներում վերջինիս է փոխանցվել սարքավորում, որով հնարավոր է բացահայտել ապօրինի հատված ծառերի վաղեմության ժամկետը:

2017թ. ընդլայնվել է համագործակցությունը հասարակական հատվածի հետ, ստորագրվել են հուշագրեր տարբեր կազմակերպությունների և բնապահպանական հարցերով մտահոգ քաղաքացիների հետ՝ հնարավորություն տալով հանրության և գիտության ոլորտի ներկայացուցիչներին ներգրավել բնապահպանական խնդիրների լուծման գործում: Նախարարին կից ձևավորվել են տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով և դոնորների խորհուրդները: Հաջորդ փուլում դոնորների խորհրդում միջազգային կազմակերպություններից գատ կներգրավվեն նաև տեղական կազմակերպությունները, որոնք ծրագրեր են իրականացնում բնապահպանության ոլորտում: Նկարիչների միության հետ ստորագրվել է համագործակցության պլատֆորմ: 33 ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի հետ ստորագրվել է համագործակցության հուշագիր և տեղում դեմոնստրացիոն հիմնելու գործողություններ են մեկնարկել: Ըստ նախարարի, այդ քայլերի նպատակը՝ հանրության

առավելագույն ներգրավումն է կառավարման գործընթացներին՝ ինչը կնպաստի նաև հասարակության մոտ էկոմշակույթի ձևավորմանը և ոլորտի կայուն կառավարմանը: Շաքիի ջրվեժի լիարժեք գործելու նպատակով, այն սնող գետի վրա գործող ՓՅԷԿ-ի հետ փոխհամաձայնության արդյունքում փոխվել է ջրօգտագործման ռեժիմը, հայտնել է Ա. Մինասյանը և հավելել. «Գործողության նպատակն է հավասարակշռել բնապահպանական և տնտեսական շահերը՝ ինչը հերքում է այն մտայնությունը, որ տնտեսական որոշումները հակադրվում են բնապահպանականին: Իրականում հնարավոր է գտնել հավասարակշռող լուծում և սա մեր զարգացման հիմնական մեկնակետը պետք է լինի: Չի կարող լինել տնտեսական որոշում անտեսելով բնապահպանականը և չի կարող լինել բացառապես բնապահպանական որոշում՝ առանց նկատի առնելով տնտեսական կամ սոցիալական հատվածը»: Մատուցելով 2018 թ. անելիքները, բնապահպանության նախարարը նշել է, որ արդեն կառավարության մի շարք ծրագրերում ամրագրված է 33 բնապահպանության նախարարության գործառնությունների վերանայման դրույթներ, որը պետք է ամբողջական և գերատեսչությունը պետք է լիարժեքորեն և խորությամբ կրի պատասխանատվություն շրջակա միջավայրի միասնական քաղաքականության իրականացման հարցերում: 2018 թ. գերակա խնդիրներից մեկը լինելու է խորքային ջրերի ծավալների նվազեցումը և այդ ջրերի օգտագործման արդյունավետության բարձրացումը՝ եկրորդային-երրորդային օգտագործման միջոցով:

Արարատյան դաշտում 2017թ իրականացված խնայողության գործողությունների արդյունքում միայն ձկնաբուծական տնտեսություններում խնայվել է 150 մլն մա ջուր, և այդ ուղղությամբ դեռ շարունակվելու են աշխատանքները:

33 բնապահպանության նախարարն անդրադարձել է նաև այս տարի արձանագրված բնական աղետներին և նշել որ գործնական քայլեր են արվել տեխնիկական զինվածության և ԲՀՊՏ-ների աշխատակիցների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ. «2018 թվականին բոլոր հատուկ պահպանվող տարածքները կունենան համապատասխան սարքավորումներով հագեցած արագընթաց մեքենաներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով կունենանք աղետների արագ հստատաբերման և արձագանքման, ինչպես նաև որսագողության և ապօրինի ծառահատումների կանխագելման սարքավորումներ», - նշել է Ա. Մինասյանը և հավելել, որ իրականացվող բարեփոխումների շրջանակներում այս տարի փոխվել են կառավարման համակարգերը: Օրինակ «Դիլիջան» ազգային պարկն անցել են հսկողության շուրջօրյա ռեժիմի և առաջիկայում այդ ուղղությամբ լայնածավալ փոփոխություններ են իրականացվելու՝ մասնավորապես նաև քսանչորսժամյա ռեժիմի իրականացման մեխանիզմների հստակեցման առումով:

Ավարտելով խոսքը՝ նախարարը վստահություն է հայտնել, որ 2017թ. արձանագրված ձեռքբերումները բազմապատկվելու և գործնականում կիրառվելու են 2018 թվականին: Ատուլիսին ներկա ԶԼՍ-ների ներկայացուցիչների հարցերին պատասխանելուց հետո, բնապահպանական խնդիրները հետևողականորեն վեր հանելու և ոլորտն օբյեկտիվ լուսաբանելու համար Արծվիկ Մինասյանը շնորհակալագրեր է հանձնել մի շարք լրագրողների և լրատվամիջոցների:

# SS ոլորտի ներուժի ներգրավվածությունը մեր ոլորտում լիարժեք չէ, 2018թ. նախարարն ակնկալում է արդյունավետություն



Նախարար Արծվիկ Մինասյանի նախագահությամբ տեղի է ունեցել նախարարին կից տեղեկատվական տեխնոլոգիաների /SS/ հարցերով խորհրդի անդրամիկ նիստը:

Ողջունելով խորհրդի անդամներին և հրավիրվածներին՝ բնապահպանության նախարարը շեշտել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներուժը և առկա ձեռքբերումները չափազանց քիչ են օգտագործվում տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանական խնդիրների լուծման մեջ: Բացը լրացնելու նպատակով Ա. Մինասյանն առաջարկել է խորհրդի նիստերն ավելի հաճախ գումարել: Տեղեկացնելով, որ 2017 թ. գերատեսչությունը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները փոքր ծավալով օգտագործել է բնության հատուկ պահպանվող տարածքների/ԲՀՊՏ-ների/ պահպանության խնդրի լուծման գործընթացում՝ Արծվիկ Մինասյանն առաջնային է համարել SS ոլորտի ներուժի լիարժեք և արդյունավետ ներգրավումը, ինչն էականորեն կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը: «Համոզված եմ, որ բնապահպանության ոլորտում SS ներգրավվածության հնարավորությունները շատ ավելին են, և դրանց իրացումը կնպաստի նաև այդ ոլորտի համար լրացուցիչ ֆինանսական միջոցների գեներացմանը և, հետևաբար, գարգացմանը: Ներկայումս մեր խնդիրն է այնպիսի դրամաշնորհային ծրագրեր մշակել, որոնք լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելով, առաջընթաց կապահովեն և՛ բնա-

պահպանության խնդիրների լուծման հարցերում, և՛ SS ոլորտում»,- հայտնել է խորհրդի նախագահը:

SS խորհրդի առաջին նիստում քննարկվել են բնապահպանական գերատեսչության ստորաբաժանումների աշխատանքների համար տեղեկատվական և նորարարական տեխնոլոգիաների պահանջարկի, Ushadir.am հարթակի գործարկման ամփոփ հաշվետվության և բնապահպանական հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման անհրաժեշտ կարողությունների ապահովման համակարգի ներդրման հետ կապված հարցեր: Լսելով ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումների ղեկավարների ներկայացրած կարիքները՝ SS խորհրդի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները դրանց մի մասով լուծումներ են առաջարկել արդեն գործող տեղեկատվական համակարգերի միջոցով, իսկ մնացած հարցերում պատրաստակամություն հայտնել լիարժեքորեն ներգրավել իրենց ընկերությունների ներուժը: Օրակարգային երկրորդ հարցի շրջանակներում «Այրես զարգացման» հիմնադրամի խորհրդի անդամ Արեգ Գեղեճյանը ներկայացրել է իրենց կողմից մշակված Ushadir.am հարթակը: Գործարկվող կայքը հնարավորություն է տալիս բնապահպանական խնդիրներով մտահոգ քաղաքացիներին և իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետության քարտեզի վրա առցանց տեղադրել ահազանգ, և նույն էլեկտրոնային պատուհանում պատասխանատու գերատեսչություններից ստանալ արձագանք, ինչը ոչ միայն կխթանի հասարակական վերահսկողական մեխանիզմի զարգացումը, այլ նաև պատասխանատու գերատեսչությունների աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացումը: Քննարկումների արդյունքում որոշվել է կայքի կառուցվածքում և բովանդակային լուծումներում լիարժեքությունն ապահովելու նպատակով կազմակերպել մասնագիտական քննարկում, ինչից հետո հարթակի սպասարկումը կփոխանցվի բնապահպանական գերատեսչությանը և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

Նիստի ավարտին Արծվիկ Մինասյանը շնորհակալություն է հայտնել արդյունավետ և օգտակար քննարկման համար, ներկայներին շնորհավորել գալիք տոների առթիվ՝ 2018 թվականին ավելի ինտենսիվ աշխատանքի և առարկայական ձեռքբերումների ակնկալիքով:



## Օզոնի ազգային կենտրոնը ամփոփում է 2017 թվականը

**2017** թվականի դեկտեմբերի 22-23-ին Ծաղկածորում տեղի է ունեցել ՀՀ բնապահպանության նախարարության Օզոնի ազգային կենտրոնի կազմակերպված 2017 թվականի տարվա ամփոփիչ և «ՀՔՖԱ-ների փուլային փոխարինում» ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում շահագրգիռ կողմերի հանդիպումը: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, Հայաստանում ՄԱԱԶԿ ներկայացուցիչ Անահիտ Սիմոնյանը, ինչպես նաև ներկայացուցիչներ ՄԱԶԾ երևանյան գրասենյակից, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից, ՀՀ կրթության և գիտության, արտակարգ իրա-

վիճակների, առողջապահության նախարարություններից, ՀՀ բնապահպանության նախարարության Միջազգային համագործակցության, Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության, Բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչություններից, Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալությունից և Հայաստանի սառնարանային ասոցիացիայից: Հանդիպման առաջին օրը մեկնարկել է «Օզոնի ազգային կենտրոնի» ազգային համակարգող Լիանա Ղահրամանյանի բացման խոսքով, ապա ներկայացվել են «ՀՔՖԱ-ների փոխարինում» ծրագրի 2-րդ փուլի ներդրումային և ոչ-ներդրումային բաղադրիչները: Այնուհետ Ամփոփվել է 2017 թվականին կենտրոնի իրականացրած գործունեությունն՝ ամփոփումն ըստ ոլորտների: Հանդիպման առաջին օրը քննարկումն անց է կացվում հարց ու պատասխաններով, որից հետո՝ երեկոյան մասնակիցները հնարավորություն են ունեցել շարունակել այն ազատ ձևաչափով, ինչը նպաստել է հաջորդ օրվա թիմային աշխատանքների արդյունավետությանը:

Դեկտեմբերի 23-ին, հանդիպման երկրորդ օրվա առաջին հատվածում, մասնակիցներին ներկայացվել է Կիզալիի ուղղումը, դրա նպատակները, նախապայմանները և Հայաստանի դիրքորոշումն այս հարցում: Նոր ծրագրեր, առաջարկներ, գաղափարներ, առկա խնդիրներին լուծման հնարավոր տարբերակներ ներկայացնելու նպատակով մասնակիցներն բաժանվել են ոլորտային փոքր աշխատանքային խմբերի, յուրաքանչյուր խմբի համար ընտրվելով արձանագրող և զեկուցող, ովքեր էլ վերջում իրենց խմբի անունից ներկայացրել են կատարված աշխատանքի ամփոփիչ ելույթներով: Քննարկումների արդյունքում նախանշվել են համագործակցությունների մոտ եզրեր:

## Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման միջգերատեսչական հանձնաժողովը իմի է բերել արվածը



Բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ ՀՀ բնապահպանության նախարար Ա. Մինասյանը:

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի

կոնվենցիայի իրականացման 2016-2020 թվականների գործողությունների ազգային ծրագիրը: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ, Ստոկհոլմի կոնվենցիայի ազգային համակարգող Ա.Ալեքսանդրյանը նիստի ընթացքում ներկայացրել է Գործողությունների ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում 2017թ. ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության և այլ գերատեսչությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքները: Կատարված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է նաև ՀՀ կառավարություն: «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների ամվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ/ԳԷՀ լայնածավալ ծրագրի իրականացման գործընթացի և ձեռքբերումների մասին զեկույցով հանդես է եկել ծրագրի համակարգող Գ. Ղարազեբակյանը:

## Ամփոփվեցին Կանաչ Տնտեսության Ուղղվարական Էկոլոգիական գնահատման արդյունքները



« Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EaP GREEN) ծրագիրն աջակցում է ԵՄ Արևելյան գործընկերության վեց երկրներին, այդ թվում նաև Հայաստանին, որպեսզի վերջիններս ավելի արագ անցում կատարեն դեպի կանաչ տնտեսություն: Ռազմավարական բնապահպանական գնահատումը (ՌԷԳ) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) ներառվել են EaP GREEN նախագծի շրջանակներում՝ որպես կանաչ տնտեսության նպատակներ և կայունության այլ խնդիրները ռազմավարական և նախագծային որոշումների կայացման գործընթացում ներառելու գործիք, որպեսզի նախքան որոշումների կայացումը հաշվի առնվեն դրանց բնապահպանական և առողջական հետևանքները:

2013թ.-ից ի վեր, EaP GREEN ծրագրի շրջանակներում, UNECE-ն աջակցում է Հայաստանին ՌԷԳ և ՇՄԱԳ ազգային համակարգի ստեղծման գործում: Եզրափակիչ միջոցառման նպատակն է՝

- Ներկայացնել EaP GREEN ծրագրի շրջանակներում ՌԷԳ և ՇՄԱԳ վերաբերյալ ձեռք բերված արդյունքները:
- Ամփոփել ՌԷԳ և ՇՄԱԳ արդյունավետ կիրառման հիմնական սկզբունքները և դրա օգուտները:
- Քննարկել երկրում ՌԷԳ և ՇՄԱԳ համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ առաջնահերթությունները և կարիքները:

Միջոցառումը կազմակերպվել է EaP GREEN ծրագրի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE), Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC Caucasus) հայաստանյան գրա-

սենյակի կողմից, որը Հայաստանում EaP GREEN ծրագրի շրջանակներում ՌԷԳ և ՇՄԱԳ բաղադրիչի ընթացիկ գործողություններն իրականացնող ազգային գործընկերն է:

Աշխատաժողովը համախմբել էր բոլոր շահագրգիռ կողմերի՝ բնապահպանական և առողջապահական մարմինների, պլանավորման գործակալությունների և կառույցների, տեղական իշխանությունների, փորձագետների և մասնագետների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ, EaP GREEN ծրագրի ազգային համակարգող Խաչիկ Հակոբյանը ներկայացրեց Կանաչ տնտեսության Ռազմավարական Էկոլոգիական գնահատման Հայաստանում ձեռքբերված արդյունքները, նշելով ՌԷԳ-ը՝ որպես բնապահպանական գործիք կիրարկելու կարևորությունը, և Եսպո արձանագրության համապատասխանեցման գործընթացը, ինչպես նաև «Հայաստանում ԿԿԹԿ ոլորտի ճանապարհային քարտեզի և Երկարաժամկետ ներդրումային ծրագրի» համար մշակված ՌԷԳ Ձեկույցը, և օրենսդրական բարեփոխումների փաթեթը: Հանդիպմանը քննարկվել են հետագա կարիքների գնահատման ռազմավարությունը /ծրագրի թիմի ազգային ղեկավար Նունե Հարությունյան/, Հայաստանում EaP GREEN ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի ԵՏՀ ցուցաբերած տեխնիկական աջակցության նկարագիրը /Մարտին Սմութնի/, EaP GREEN ծրագրի համակարգող, ՄԱԿ-ի ԵՏՀ խորհրդատու, Օրենսդրական դաշտի մշակումը /Գոռ Մովսիսյան/, ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային իրավական փորձագետ, ՌԷԳ առաջընթացը. 2013 թ.-ից Հայաստանում ՌԷԳ և ՇՄԱԳ համակարգի զարգացման նկարագիրը, հիմնական արդյունքները և ձեռքբերումները և այլ թեմաներ: Քննարկվել են նաև ՌԷԳ և ՇՄԱԳ լիարժեք համակարգերի ստեղծման համար մարտահրավերները և կարողությունների զարգացման առաջարկները, որոնք կներկայացվեն ՄԱԿ-ի ԵՏՀ հետագա հաստատմանը: Արդյունավետ ՌԷԳ և ՇՄԱԳ համակարգերի հիմնական տարրերը ներկայացվել են Մայա Գաչեչիլաձե-Բոժենկու, UNECE խորհրդատուի կողմից:

Հանդիպմանը մասնակցում էին պատասխանատու այլ գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

## Ինչքան է կազմել մեկ շաբաթում ԵՐԶԱԿԱ միջավայրին հասցված վնասը



**ՀՀ** ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ս.թ. դեկտեմբերի 18-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, Տեսչական մարմնին հանձնված վարչական վարույթի քննության, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերվել և արձանագրվել է թվով 22 իրավախախտում, 10-ի (որից 2-ը՝ նախկինում հայտնաբերված) վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 780.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է 5.396.750 ՀՀ դրամ: Մասնավորապես՝

**Քուսական աշխարհի պահպանության ոլորտ**  
Արձանագրվել է իրավախախտման 13 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 320.000 ՀՀ դրամ տուգանք, հաշվարկվել 5.396.750 ՀՀ դրամ շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝ Լոռի ապօրինի ծառահատման 3 դեպքով (20 բոխի, 1 ակացիա) հաշվարկվել է 466.500 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:



Տավուշ ապօրինի ծառահատման 7 դեպք (20 բոխի, 13 հաճարենի, 3 կաղնի, 2 հացենի, 4 դաժի, 11 սոճենի, 1 թխկի), որից 3 դեպքով հաշվարկվել է 4.163.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին, 4 դեպքով քննված վարչական իրավախախտման վարույթը գտնվում է քննության ընթացքում: Գեղարքունիք ապօրինի ծառահատման 1 դեպքով (7 ցցաչոր թեղի) նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 70.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, վառելիքայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքով (1 խմ փայտանյութ) նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 36.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

Վայոց ձոր ապօրինի արածեցման 1 դեպքով նշանակվել է 70.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք հաշվարկվել 20.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս: Նախկինում հայտնաբերված իրավախախտում

Լոռի ապօրինի ծառահատման 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Տավուշ ապօրինի ծառահատման 4 դեպքով (7 բոխի, 2 հաճարենի, 4 ընկուզենի) հաշվարկվել է 641.250 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, 37 դեպքի վերաբերյալ վարչական իրավախախտման վարույթները դեռևս գտնվում են քննության ընթացքում:



**Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ**  
Արձանագրվել է իրավախախտման 4 դեպք: Գեղարքունիք ձկան ապօրինի որսի 3 դեպք (առգրավվել է 326 հատ՝ 157 կգ սիգ տեսակի ձուկ) և հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին: Չկան ապօրինի որսի 1 դեպք (առգրավվել է 367 հատ՝ 148.3 կգ սիգ տեսակի ձուկ և հանձնվել է Գավառի մանկատուն, մարզի մանկապարտեզներ, Սևանի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ):



**Մթնոլորտային օդի և ջրերի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ**  
Արձանագրվել է իրավախախտման 3 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 210.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, որից՝

Արմավիր առանց անթափանց ծածկոցի ավազի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և չնախատեսված վայրում կենցաղային աղբի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 80.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Շիրակի հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման 1 դեպքով նշանակվել է 30.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Նախկինում հայտնաբերված իրավախախտում Երևան առանց անթափանց ծածկոցի շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

**Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար**

Կայացվել է վարչական տուգանքի 2 որոշում. Գեղարքունիք՝ 2 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 100.000 և 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 1.785.795 ՀՀ դրամ:

# Բնության ուեսական թանգարանում Գեղագիտության ազգային կենտրոնի սաների նրբաճաշակ գործերն էին



Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի է ունեցել «Գեղատեսիլ ծառուղի» խորագիրը կրող ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսը ներկայացրել էին Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի սաները: «Գեղատեսիլ ծառուղի» ցուցահանդեսի շրջանակներում նրանք ներկայացրել էին բազմազան աշխատանքներ, որոնք յուրաքանչյուրիս գրավում են իրենց պայծառությամբ և երեխաներին բնորոշ անկեղծությամբ: Ներկայացված էր նաև պլաստիլինից պատրաստված աշխատանքներ, որոնց հեղինակն է 5 տարեկան Մարիա Փիրումովան: Միջոցառման ավարտին ելույթով հանդես եկան ՀՀ Գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն Լևոն Իգիթյանը և մանկավարժ Գոհար Միրզոյանը: Նրբաճաշակ և գունազարդ ցուցահան-

**Հայաստանի բնության պետական թանգարան**



**«ԳԵՂԱՏԵՍԻԼ ԾԱՌՈՒՂԻ»**

**ՑՈՒՑԱՀԱՆՐԵՍ**

**Տ. Իգիթյանի անվան ԳԶՄ-ի ստուգիա-ֆուլեզի գեկորասիվ-կիրառական արվեստի արվեստանոցի սաների մասնակցությամբ**

*մանկավարժներ՝*  
**Գ. Միրզոյան,**  
**Մ. Հարությունյան**

**բացումը՝ գեկտեմբերի 23-ին, ժամը 14:00**



դես ներկայացնելու համար Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի «Կերպարվեստ և դեկորատիվ արվեստ» ստուդիային Հայաստանի բնության պետական թանգարանի կողմից շնորհվել է շնորհակալագիր: Այն հանձնել է թանգարանի տնօրեն Գայանե Ղազարյանը:



Նախագիծը՝ Արծրուն Պետանյանի  
 Խմբագիր՝ Սանվել Սևրջյան  
 Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
 Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Դեռախոս՝  
 011 818 517